Հաշվետվություն

2017 թվականին ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կատարած աշխատանքների վերաբերյալ

(կրթության ոլորտ)

- 2017 թվականին մարզում գործել են մարզային ենթակայության 118 (80-ը՝ միջնակարգ,38-ը՝ հիմնական), 1 հատուկ, և կրթության և գիտության նախարարության ենթակայության 3 ավագ (Աշտարակ, Թալին, Ապարան քաղաքներում) դպրոցներ, 5 մարզադպրոց, 2 արհեստագործական պետական ուսումնարան, 1 տարածաշրջանային պետական քոլեջ, 5 երաժշտական (Աշտարակ, Արագածավան, Ուջան, Թալին, Օշական), 4 արվեստի (Կոշ, Ապարան, Ոսկեվազ, Արագած), 2 գեղարվեստի (Աշտարակ, Թալին) և 1 պարարվեստի (Աշտարակ) դպրոցներ:

- Մարզում ձևավորվել է 1259 դասարան՝ 16 516 աշակերտով, առաջին դասարան ընդունվել 1823 աշակերտ:

- Դպրոցներն ըստ տեղակայության ունեն հետևյալ պատկերը.

սահմանամերձ	լեռնային	բարձր լեռնային	քաղաքային	գյուղական
2	22	40	13	109

- 2017-2018 ուսումնական տարում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն ընդգրկվել են մարզում գործող **Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոց**, որտեղ կոմպլեկտավորվել է 9 դասարան՝ 54 աշակերտով, առաջին դասարան է հաճախել 5 աշակերտ: Նրանք ունեն բժշկահոգեբանամանկավարժական գնահատման եզրակացություն և վկայագիր:

- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող **9** երեխայի հետ տարվում է **տնային ուսուցում**:

հետ տարվում է **տնային ուսուցում**:

- ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ենթակայության Աշտարակի թիվ 3, Թալինի թիվ 1, Թալինի թիվ 2, Արտենիի հիմնական, Աշնակի միջնակարգ (57 աշակերտ) և ՀՀ ԿԳՆ ենթակայության Աշտարակի ավագ դպրոցներում (2 աշակերտ) իրականացվել է **ներառական կրթություն**: Դպրոցների թիվն է ավելացել է 4-ով:



- 2017 թվականի ընթացքում ՀՀ Արագածոտնի մարզպետը 32 որոշում է կայացրել մարզային ենթակայության Աշտարակի թիվ 1, Աշտարակի թիվ 2, Օշականի, Ավշենի, Հացաշենի հիմնական, Արագածավանի թիվ 1, Հարթավանի, Մաստարայի, Ագարակավանի, Օշականի, Օհանավանի, Ճարճակիսի, Կարմրաշենի, Գառնահովիտի, Լուսակնի, Գեղարոտի, Գեղաձորի, Սասունիկի, Աղձքի միջնակարգ դպրոցների և Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոցի կառավարման խորհուրդների կազմերում փոփոխություններ կատարելու մասին.

- Համաձայն ՀՀ կառավարության 06.07.2017թ. N 801-Ն որոշման 2-րդ կետի հանձնարարականի ՀՀ Արագածոտնի մարզպետի որոշումներով սահմանված ժամկետում հաստատվել են մարզպետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների կանոնադրությունները:

- ՀՀ Արագածոտնի մարզպետի առաջարկությամբ և ՀՀ կառավարության 12.10.2017թվականի N 1300-Ն որոշմամբ <<Լուսակնի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ը վերանվանվել է <<Լուսակնի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ և կատարվել են համապատասխան գրանցումներն ու փոփոխությունները:

ՀՀ կառավարության քննարկման է ներկայացվել նաև մարզի <<Մեծաձորի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի հետագա գործունեության նպատակահարմարության մասին առաջարկ: Քանի որ դպրոցում սովորում է 2 աշակերտ, նպատակահարմար է նրանց ուսուցումը կազմակերպել մոտ գտնվող Վերին Սասնաշեն համայնքի դպրոցում:

- Մարզային ենթակայության Արագածավանի թիվ 1 միջնակարգ և ՀՀ ԿԳՆ ենթակայության Աշտարակի ավագ դպրոցներն ընդգրկվել են <<Արարատյան բակալավրիատ>> կրթական ծրագրում:

-Պետական ուսումնական հաստատություններին օգտագործման իրավունքով հանձնված շենքերի, համայնքային սեփականություն հանդիսացող նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերի շահագործումը ՀՀ Արագածոտնի մարզում իրականացվում է ծառայողական նշանակությամբ: Շենքերն այլ նպատակներով չեն օգտագործվում: Մարզպետի կողմից չի կատարվել դպրոցական և նախադպրոցական շենքերի գույքի օտարում:

2017 թվականին ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներին պատկանող անշարժ գույքի՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչութուն հանձնելու գործընթացը շարունակվում է: Դպրոցական անշարժ գույքը ՀՀ ԿԱՊԳԿ վարչության տնօրինությանը հանձնած դպրոցների տնօրենները վարչության հետ կնքել են անհատույց օգտագործման պայմանագրեր:

Համաձայն ՀՀ վարչապետի 16.10.2014թ. թիվ 02/23.17/16802-14 հանձնարարականի ժամանակին հավաքագրվել և **ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչութուն** է ուղարկվել մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչների տներում բնակվող բնակիչների համապատասխան փաստաթղթերի փաթեթը՝ բնակարանների և բնակելի տարածքների նվիրատվության գործընթացը կազմակերպելու համար: ՀՀ կառավարության որոշմամբ Մաստարայի միջնակարգ դպրոցին պատկանող ուսուցչական տունն արդեն հանձնվել է բնակիչներին՝ որպես նվիրատվություն: Հավաքագրվել և ժամանակին ՀՀ ԿԳՆ է ուղարկվել մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններին ամրացված տարածքների օգտագործման արդյունավետության վերաբերյալ տեղեկատվությունը:

- 2017թ. ՀՀ Արագածոտնի մարզի կրթական հաստատություններում կատարվել կամ ընթանում է շինարարական աշխատանքներ՝ պետական բյուջեի, <<Հայաստան>> համահայկական և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամների միջոցներով:

Դպրոցաշինության բնագավառում իրականացված ծրագրեր

h/h	Ծրագրի անվանումը	2017թ.
	ՀՀ ՔՆ պատվիրատվությամբ	
	գ.Արագածի թիվ 1 դպրոցի վերակառուցում	20,000.0
	ՀՀ Արագածոտնի մարզպետարանի պատվիրատվությամբ	
	Կոշ համայնքի նախադպրոցական մասնաշենքի վերանորոգում	9,467.7
	Թաթուլի դպրոցի սպորտային մասնաշենքի վերանորոգում	11,973.1
	Կաթնաղբյուրի դպրոցի վերանորոգում	17,802.8
	Ներքին Սասնաշենի դպրոցի տանիքի վերանորոգում	13,088.7
	Արտաշավանի մանկապարտեզի վերանորոգում	8,947.8
	Գեղաձորի մանկապարտեզի վերանորոգում -	8,932.9
	Լեռնապարի դպրոցի արտաքին ջրագծի կառուցում	5,016.1
	Ռյա Թազայի դպրոցի գազամատակարարման ավարտում	1,139.8
	«Հայաստան» համահայկական հիմնադրամ	
	ՀՀ Արագածոտնի մարզի Աղձք համայնքում մանկապարտեզի կառուցում	169,000.0
	Օշական գյուղի դպրոցի հիմնական մասնաշենքի ջեռուցման ներքին համակարգի վերակառուցում	14,971.5
	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ /ՀՏԶՀ/	
	Օհանավանի մանկապարտեզի վերակառուցում	125,000.0
	Փարպիի մանկապարտեզի վերակառուցում	61,000.0
	Ապարան քաղաքի մանկապարտեզի տեղակայում դպրոցի վերակառուցվող մասնաշենքում	43,500.0

	Աշտարակի <<Արևիկ>> մանկապարտեզի վերակառուցում	127,900.0
	Թալինի թիվ 3 մանկապարտեզի վերակառուցում	87,400.0
	Ալագյազի դպրոցի վերակառուցում	10,000.0
	Ոսկեվազի մանկապարտեզի վերակառուցում	52,166.0
	Ուջանի մանկապարտեզի վերակառուցում	73,629.0

2018 թվականին կատարվելու են Սասունիկի, Շենավանի միջնակարգ և Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոցների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ ՝ նոր շենք կառուցելու համար: Հիմնանորոգման խիստ կարիք ունեն Նոր Ամանոսի, Նոր Եդեսիայի, Հնաբերդի, Գեղաձորի միջնակարգ և Աշտարակի Վ.Պետրոսյանի անվան հիմնական դպրոցները: Ներկայացվել է հայտ այդ դպրոցներում պետական բյուջեի միջոցներով շինարարություն կատարելուա համար:

Կառուցվել են թեքահարթակներ Թալինի թիվ 1, Թալինի թիվ 2 հիմնական, Ծաղկահովտի, Աշնակի, Վարդենիսի միջնակարգ դպրոցներում: Թալինի թիվ 1 հիմնական և Վարդենիսի միջնակարգ դպրոցներում առկա են նաև հարմարեցված սանհանգույցներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար:

-2017 թվականին վարկանիշավորում անցկացնելու համար ժամանակին հավաքագրվել, ԿՏԱԿ-ին և ԿԳՆ է ներկայացվել տեղեկատվություն մարզի բոլոր հանրակրթական դպրոցների վերաբերյալ:

- 2017թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին մարզի Վերին Սասնաշենի, Վերին Բազմաբերդի, Դիանի, Մուղնու,Ցամաքասարի, Հակոյի, Արևուտի, Դդմասարի, Թլիկի, Գետափի հիմնական և Լուսակնի Նոր Արթիկի, Դաշտադեմի, Ոսկեհատի, Կարբիի, Ակունքի, Գառնահովտի, Պարտիզակի, Արտաշավանի, Բազմաղբյուրի,Ղազարավանի, Զովասարի, Շղարշիկի միջնակարգ դպրոցներում մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության աշխատակիցների կողմից կատարվել են ուսումնասիրություններ, տրվել են գրավոր աշխատանքներ հ.լեզու, մաթեմատիկա առարկաներից:

-2017 թվականին ՀՀ Արագածոտնի մարզպետի կարգադրությամբ կարգապահական տույժի են ենթարկվել Հնաբերդի /խիստ նկատողություն/, Կարբիի, Արտենիի թիվ 1 միջնակարգ և Աշտարակի Վ. Պետրոսյանի անվան, Արտենիի, Օշականի հիմնական դպրոցների տնօրենները /նկատողություն/՝ աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար, ընդ որում Կարբիի միջնակարգ դպրոցի տնօրենն ազատվել է աշխատանքից 1 տարվա ընթացքում նրա նկատմամբ կարգապահական կրկնակի տույժ կիրառելու պատճառով: Համաձայն անձնական դիմումի աշխատանքից ազատվել են Մուղնու հիմնական և Կարմրաշենի միջնակարգ դպրոցների տնօրենները:

- Մարզի Աշտարակի թիվ 2, Աշտարակի Վ.Պետրոսյանի անվան, Մուղնու, Օշականի, Թալինի թիվ 1, Մեծաձորի, Սորիկի, Վերին Բազմաբերդի, Վերին Սասնաշենի, Եղնիկի, Թլիկի, Դդմասարի, Դիանի, Թթուջրի, Արայի, Շենկանիի, Սադունցի, Ջամշլուի հիմնական և Ուշիի, Սասունիկի, Լեռնարոտի, Անտառուտի, Օրգովի, Նոր Ամանոսի, Կարինի, Ոսկեհատի, Արագածավանի թիվ 1, Արագածավանի թիվ 2, Բյուրականի. Նորաշենի, Կարմրաշենի, Երնջատափի, Գեղաձորի, Թաթուլի, Գեղարոտի, Վարդենիսի, Ճարճակիսի, Ալագյազի, Կաթնաղբյուրի, Ներքին Սասնաշենի, Շղարշիկի, Քուչակի, Ագարակավանի, Դաշտադեմի, Լուսագյուղի, Նիգավանի, Արտենիի թիվ 1, Մելիքգյուղի, Նոր Արթիկի, Ներքին Բազմաբերդի, Գեղադիրի, Ափնայի միջնակարգ դպրոցներում անցկացվել են մրցույթներ՝ դպրոցի տնօրենի թափուր տեղի

համար: Մրցույթներում հաղթող ճանաչված մասնակցների հետ օրենքով սահմանված կարգով կնքվել են աշխատանքային պայմանագրեր: Մրցույթներ չեն կայացել Լեռնարոտի, Թաթուլի, Կարմրաշենի, Նոր Ամանոսի միջնակարգ դպրոցներում՝ դիմորդ չլինելու պատճառով:

- 2010 թվականից ուսուցչի թափուր տեղը համալրելու համար անց են կացվում մրցույթներ՝ մարզային, հանրապետական ՋԼՄ-ներով սահմանված կարգով հայտարարություններ տպագրելով: 2017 թվականին մարզի 81 հանրակրթական դպրոցում տարբեր առարկաներից հայտարարվել են ուսուցչի թափուր տեղի մրցույթներ: Մրցույթներում հաղթող ճանաչված մասնակցների հետ կնքվել են աշխատանքային պայմանագրեր: Մրցույթ չկայանալու կամ մրցույթի արդյունքում հաղթող չճանաչվելու դեպքում հայտարարվել է նոր մրցույթ:

- ՀՀ Արագածոտնի մարզում գործում է համայնքային ենթակայության 36 **նախադպրոցական ուսումնական հաստատություն**, որտեղ ձևավորվել է 94 խումբ՝ 2659 երեխայով, որոնցից 24-ը ազգային փոքրամասնության/եզդի/, 8-ը՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ են:

Նախադպրոցական տարիքի երեխաների թիվը	Նախադպրոցական հաստատություններում երեխաների ընդգրկվածությունը		Նախակրթարաններում երեխաների ընդգրկվածությունը	
	3-5 տարեկան երեխաների թիվը / %-ը	5-6 տարեկան երեխաների թիվը / %-ը	3-5 տարեկան երեխաների թիվը / %-ը	5-6 տարեկան երեխաների թիվը/%-ը
8102	**1587/19.3%**	**911/11.2 %**	**93/1.14%**	**466/5.75%**

Շամիրամի հիմնական դպրոցում գործում է նախակրթարան, ուր հաճախում են 13 եզդի երեխա:

ՀՀ Արագածոտնի մարզում գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրեններից 28-ը ունի բարձրագույն, 5-ը՝ միջին մասնագիտական կրթություն:

Վերանորոգված նախադպրոցական ուսումնական հաստատությունները ապահովված են երեխաների տարիքային առանձնահատկություններին համապատասխանող գույքով, մեթոդական ձեռնարկներով, դիդակտիկ պարագաներով: ՀՀ կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը իրականացվում է մարզում գործող համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից սահմանված ժամկետում: ՀՀ ԿԳ նախարարության կողմից ստացվել և բաշխվել է նախադպրոցական կրթական, մեթոդական ձեռնարկներ, ուսումնաօժանդակ այլ նյութեր:

- ՀՀ Արագածոտնի մարզի 36 հանրակրթական դպրոցում գործում է **նախակրթարան**՝ 453 երեխայով, որտեղ իրականացվում է նախադպրոցական կրթություն՝ կրթական պետական չափորոշիչներին համապատասխան: Նախակրթարանները ապահովված են երեխաների տարիքային առանձնահատկություններին համապատասխանող գույքով, մեթոդական ձեռնարկներով, դիդակտիկ պարագաներով:

-Մարզի հանրակրթական 115 դպրոց ստացել է **լիցենզիաներ**: Դպրոցների լիցենզավորման աշխատանքները ընթացքի մեջ են, ընթանում է նախակրթարանների լիցենզավորման գործընթացը:

-Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման համար ՀՀ Արագածոտնի մարզպետարանում ժամանակին վերլուծվել, ըստ ոլորտների հաշվառվել է **նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթությամբ** անհրաժեշտ կադրերի պահանջարկը: Սահմանված ժամկետում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման և կրթության և գիտության նախարարություններ է ուղարկվել տեղեկատվություն տարբեր ոլորտներում նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթությամբ 299 կադրի պահանջի վերաբերյալ:

- Մարզային ենթակայության ուսումնական **118** դպրոցից լոկալ ջեռուցմամբ ապահովված են **59**-ը, **26**-ը ջեռուցվում են էլեկտրական ջեռուցիչներով, իսկ **33**-ը՝վառարաններով:

- 2017-2018 ուսումնական տարում ՀՀ Արագածոտնի մարզում ժամանակին ստացվել և բաշխվել է 33 763 դասագիրք: Ս/թ նոյեմբերից դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի կողմից մեկնարկել է ՀՀ հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների սովորողներին դասագրքերով ապահովելու գործընթացն ավտոմատացված համակարգով իրականացնելու պիլոտային ծրագիրը, որում ընդգրկված են մարզի Աշտարակի թիվ 1 հիմնական, Նոր Ամանոսի, Օշականի, Կոշի, Ներքին Սասնաշենի, Արագածավանի թիվ 1, Վարդենուտի, Շենավանի, Ծաղկահովիտի, Նորաշենի, Արագածի թիվ 1 միջնակարգ դպրոցները: Մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամ /ԴՏՀՏՇՀ/ է փոխանցվել 54 046 670 դրամ: Մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունները **չունեն** դասագրքերի վարձավճարների պարտք: Մարզի համայնքներում գործող **ազգային փոքրամասնությունների** դպրոցները ապահովված են ՀՀ ԿԳՆ կողմից իրենց մայրենի լեզվով երաշխավորված համապատասխան դասագրքերով: ՀՀ Արագածոտնի մարզպետի կողմից հանձնարարվել է մարզի հանրակրթական դպրոցներին օգտագործել ՀՀ ԿԳՆ կողմից երաշխավորված ուսումնական գրականություն և ուսումնադիտողական պարագաներ: Մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչներին և տնօրեններին է բաշխվել ուսումնամեթոդական ձեռնարկներ, բոլոր դպրոցներն ապահովվել են մեթոդական գրականությամբ և տեղեկագրերով, առարկայական ծրագրերով:

- Նախաատեստացիոն վերապատրաստում են անցել 511 ուսուցիչ; ՀՀ ԿԳ նախարարի **07.11**.2017 N 1496-Ա հրամանով ձևավորված Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների ատեստավորման հանձնաժողովի աշխատանքները սկսվել և ավարտվել է սահմանված ժամկետում: Ատեստավորման ենթակա **494** ուսուցչի համար հանձնաժողովը կայացրել է <<**համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին**>> որոշում:

- Մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների **23** ուսուցիչ ունի որակավորման առաջին, 3-ը՝ որակավորման երկրորդ տարակարգ:

- Նախադպրոցական տարիքի երեխաների կրթական որակը բարելավելու նպատակով մարզի 36 հանրակրթական դպրոցում բացվել է **նախակրթարաններ**, որտեղ հաճախում են 5 տարեկան 453 երեխա: Նախադպրոցական տարիքի երեխաների կրթական որակը բարելավելու նպատակով մարզի 8՝ Ավանի, Ուջանի, Աղձքի, Ագարակի, Ոսկեվազի, Կաթնաղբյուրի, Վարդենիսի միջնակարգ և Արայի հիմնական դպրոցներում բացվել են **նախակրթարաններ**, ուր հաճախում է 116 երեխա: Նախադպրոցական տարիքի երեխաների կրթության որակը բարելավորելու նպատակով նախատեսվում է մարզի սահմանամերձ և բարձր լեռնային համայնքներում ևս բացել նախակրթարաններ: Նախակրթարանները ապահովված են երեխաների

տարիքային առանձնահատկություններին համապատասխանող գույքով, մեթոդական ձեռնարկներով, դիդակտիկ պարագաներով:

- Համագործակցելով միջազգային կազմակերպությունների հետ և անհատ բարերարների միջոցների հաշվին մարզի նախադպրոցական հաստատություններում և հանրակրթական դպրոցներում 2017 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

✓ **<<COAF>>** հիմնադրամի (2 510 180դրամ), Արագածավանի համայնքապետարանի (650 000 դրամ) և <<Թալին>> ՋՕԸ (400 000 դրամ) միջոցներով հիմնանորոգվել և կահավորվել է Արագածավանի թիվ 1 դպրոցի բուֆետը,ճաշարանը և ատամնակայանը: Արտենիի միջնակարգ դպրոցում իրականացնում է <<Առողջ ապրելակերպ>> դասընթացը 7-12-րդ դասարանների աշակերտների համար:

✓ **Հայ օգնության միությունը** ՀՀ Արագածոտնի մարզպետարանի հետ համագործակցության արդյունքում Սասունիկի միջնակարգ դպրոցի տարրական դասարանների աշակերտներին նվիրաբերել է տաք հագուստ:

✓ **«Վորլդ Վիժն»** ՄԲԿ-ի կողմից անցկացրել է վերապատրաստման դասընթացներ Արտենիի միջնակարգ (Անվտանգ համացանց) և Ցամաքասարի հիմնական դպրոցների ուսուցիչների և աշակերտների համար: Կազմակերպությունը Ներքին Բազմաբերդի միջնակարգ դպրոցում կահավորել (1 119 500 դրամ) սենյակ, որտեղ գործում է <<IMPACT>> ակումբը, ուր հաճախում են դպրոցի տարբեր տարիքի աշակերտներ և քննարկում համայնքում առկա խնդիրները, իսկ Կաքավաձորի միջնակարգ դպրոցում նաև վերանորոգել է սենյակ, որտեղ ևս գործում է <<IMPACT>> ակումբը, ուր հաճախում են դպրոցի տարբեր տարիքի աշակերտներ և քննարկում համայնքում առկա խնդիրները: Կազմակերպությունը կազմակերպել է ամառային ճամբար Նոր Արթիկի միջնակարգ դպրոցի VI-IX դասարանների աշակերտների համար <<Իմ խաղաղության ճանապարհը>> թեմայով:

✓ **«Վորլդ Վիժն»** միջազգային բարեգործական կազմակերպությունը **<<VivaCell-MTS>>** կազմակերպության հետ համատեղ Արտենիի միջնակարգ դպրոցում կահավորել են ինտերակտիվ դասասենյակ (smart գրատախտակ, 6 համակարգիչ և կահույք):

✓ **Բելգիահայ բարերար Ռ. Արսլանյանի միջոցներով** 1 125 000 դրամի շրջանակներում վերանորոգվել է Թալինի թիվ 1 հիմնական դպրոցի ջրագիծը, կառուցվել է նոր՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված, սանհանգույց, թեքահարթակ՝ դպրոցի մուտքի մոտ, նվիրաբերվել է ուսուցչական և աշակերտական կահույք, վերանորոգվել և կահավորվել է սենյակ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար, բարեկարգվել և սալիկապատվել է Հայրենական Մեծ պատերազմում զոհված ուսուցիչների՝ դպրոցի բակում կանգնեցված հուշարձանի տարածքը:

✓ Արտերկրում բնակվող Ոսկեվազի միջնակարգ դպրոցի **նախկին շրջանավարտների** նվիրաբերած 5 500 000 դրամով վերանորոգվել են դպրոցի պարիսպն ու դարպասները:

✓ Նոր Ամանոսի միջնակարգ դպրոցում իրականացվել են 1 052 000 դրամի վերանորոգման աշխատանքներ:

-Նախադպրոցական կրթության զարգացման ուղղությամբ 2017 թվականին ՀՀ ԿԳՆ ԿԱԻ-ի Արագածոտնի մասնաճյուղի կողմից կազմակերպվել են նախադպրոցական ուսումնական հաստատությունների

տնօրենների, մանկավարժների, դաստիարակների,դասընթացներ նախադպրոցական ուսումնական հաստատությունների երաժշտական դաստիարակների համար:

- **ՄԱԿ-ի խաղաղության կորպուսի** կամավորները անգլերեն լեզվի անվճար դասընթացներ են կազմակերպում Աշտարակի և Թալինի տարածաշրջանների դպրոցներում;

- **ՄԱԿ-ի ՊՀԾ-ն** կողմից 2010 թվականից մարզում իրականացվող <<Դպրոցական տաք սնունդ>> ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկին 2017թվականին **ավելացան ևս 12-ը՝** դառնալով 55 դպրոց: 2017 թվականին ծրագրից օգտվում են նախակրթարանների և 1-4-րդ դասարանների 4344 աշակերտ:

- 2014 թվականից Աշտարակի, Թալին, Արագածի և Ապարանի տարածաշրջանների դպրոցները միացել են **dasaran.am** կայքին: Մարզի 119 դպրոցում գործում է ինտերնետային կապ: Հանրակրթական դպրոցներում ձևավորվել են հագեցած համակարգչային կաբինետներ: ԿՏԱԿ-ի հետ սերտ համագործակցության արդյունքում բոլոր դպրոցներն ունեն էլեկտրոնային հասցե **schools.am** տիրույթում, որը հնարավորություն է տալիս դպրոցներ հասցնել կրթության բնագավառի նորությունները, ինչպես նաև դպրոցներից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն: Կայքէջերում լուսաբանվում է դպրոցներում իրականացվող ուսումնական, մշակութային և ֆիզիկական դաստիաչակության գործընթացը, սահմանված կարգով տեղադրվում բյուջեն, ֆինանսական եռամսյակային հաշվետվությունները և այլ փաստաթղթեր: Մարզի բոլոր դպրոցները սահմանված ժամկետում **ԿՏԱԿ-ին** են ներկայացրել պահանջվող հաշվետվությունների թղթային և էլեկտրոնային փաթեթները, որը մուտքագրվել է նաև **emis.am** կայքում:

- **U**սահմանված ժամկետում **aragatsotn.mta.gov.am** կայքում տեղադրվել է կրթության բնագավառում մարզպետարանի գործունեության մասին հաշվետվությունը: Մարզպետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության և մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների փոխադարձ էլեկտրոնային կապը պահպանվում է aragatsotn.krtutyun@mta.gov.am և դպրոցների պաշտոնական էլեկտրոնային հասցեների միջոցով: Մարզպետարանի և դպրոցական կայքէջերում սահմանված կարգով տեղադրվում են բյուջեի կանխատեսումը, եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները և պահանջվող այլ տեղեատվություն: Դպրոցական կայքէջերում ակտիվորեն լուսաբանվում են դպրոցում անցկացվող հանրապետական, մարզային և դպրոցական միջոցառումները: ՀՀ Արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցների տնօրենների մրցույթների հայտարարությունները՝ դպրոցների կառավարման խորհուրդների նախագահների, իսկ ուսուցիչների թափուր տեղերի մրցույթների հայտարարությունները՝ տնօրենների կողմից համապատասխանաբար ժամանակին տեղադրվել են **մարզային և հանրապետական թերթերում, edu.am, azdarar.am, aragatsotn.mta.gov.am** կայքերում, **<<Կրթություն>>** շաբաթաթերթում, դպրոցների անհատական կայքէջերում:ՀՀ Արագածոտնի մարզի կրթության բնագավառում կատարված աշխատանքների և ձեռքբերումների մասին տեղեկատվություն է տպագրվում **<<Կանթեղ>>, <<Արագած աշխարհ>>,<<Թալին աշխարհ>>** և **<<Դարձ>>** մարզային թերթերում, մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

- Անց են կացվել <<Տարվա լավագույն տնօրեն,ուսուցիչ, դաստիարակ>>, ՀՀ ԿԳՆ և Հայ Առաքելական եկեղեցու համատեղ <<Լավագույն ուսուցիչ>> մրցույթները: Ուսուցչի օրվա առթիվ Օշականի <<Անահիտ>>մանկապարտեզի դաստիարակչուհի Մարինե Մկրտչյանը ՀՀ Վարչապետի կողմից պարգևատրվել է պատվոգրով:

- Սերտ համագործակցում ենք <<Դասավանդիր Հայաստան >> հիմնադրամի հետ: 2017 թվականին արդեն համապատասխան ուսուցիչներով համալրվել են Շամիրամի, Ցամաքասարի հիմնական և Ճարճակիսի միջնակարգ դպրոցները:
- Մեր դպրոցականները փայլուն են հանդես եկել հանրապետական փուլում .

1-ին կարգ - Հայրապետյան Անի / Աշնակի միջնակարգ դպրոց/- հ.լեզու

2-րդ կարգ - Ավետիսյան Անի /Ոսկեհատի միջնակարգ դպրոց/- հ.գրականություն

3-րդ կարգ – Մալխասյան Կարինե /Գեղաձորի միջնակարգ դպրոց- հ.գրականություն

Գրիգորյան Վարդուշ /Օշականի միջնակարգ դպրոց/- հ.գրականություն

Գովասանագիր – Զաքարյան Արշակ /Աշտարակի թիվ 4 հիմնական դպրոց/-ՀԵՊ

Գրիգորյան Անուշիկ /Ներքին Սասնաշենի միջնակարգ դպրոց//- հ.լեզու

Գրիգորյան Սուսաննա/Ներքին Սասնաշենի միջնակարգ դպրոց/-ֆրանսերեն

Կրթության ազգային ինստիտուտի «Ինֆորմատիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաներ» բաժնի և «Կանայք և տեղեկատվական հասարակությունը» ՀԿ-ի կազմակերպած «Աշխարհի խոշորագույն տեխնոլոգիական ձեռներեցության մրցույթը աղջիկների համար» համաշխարհային մրցույթի արդյունքում Հայաստանի Կարբի գյուղի՝ 5 աղջիկներից բաղկացած «Մեկ քայլ առաջ» թիմը իր ժեստերի հայերեն լեզուն սովորեցնող հավելվածով օգոստոսի 7-11-ը մասնակցել է ԱՄՆ-ի Սիլիկոնե Հովտում անցկացվող «Technovation» միջազգային մրցույթին, «Կրթություն» անվանակարգում հաղթող ճանաչվել և արժանացել «Մարդկանց ընտրություն» մրցանակին: Հայ երիտասարդ աղջիկներից կազմված խումբն ընդգրկվել է Google-ի կազմակերպած Technovation Challenge հավելվածների մրցույթի եզրափակիչ անցած թիմերի թվում՝ հաղթելով հանդիսատեսի համակրանք անվանակարգում:Աշտարակի թիվ 2 հիմնական դպրոցի փոքրահասակների թիմը նվաճեց Գրան պրի մրցանակ:

- <<Մեղու. հայերենը բոլորի համար>> մրցույթում Ագարակի միջնակարգ դպրոցի 2 աշակերտ պարգևատրվել է ՀՀ Նախագահի հավաստագրով և հուշամեդալով: